

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ «ԱՅԲԸԲԻՄԸՆ» ԽԱՂԻ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պրոֆ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Սայաթ-նովան իր «Այբբբիմըն» խաղի մեջ գաղտնագրել է ուշագրավ մի ծածկագրություն, որը կարևոր է համարվում նրա ծննդյան տարեթվի վիճելի հարցը լուծելու տեսանկյունից: Պարզվել է, որ ծածկագրության մեջ գաղտնագրված է խաղի գրչության թվականը, իսկ քանի որ նույն խաղի մեջ բանաստեղծը մատնացույց է արել իր տարիքը («Սայաթ-նովա, տարիտ էլավ քարասուն»), ուստի եթե հնարավոր լինի անսխալ գտնել խաղի գրչության թվականը, ապա դժվար չի լինի որոշել բանաստեղծի ծննդյան տարեթիվը:

Սայաթ-նովայի խնդրո առարկա խաղը գրի է առնված ո՛չ թե բանաստեղծի դավթարում, այլ նրա որդու՝ Օհանի կազմած ժողովածուում: Այն մեզ է հասել, դժբախտաբար, խաթարված վիճակում. բանաստեղծի որդին, ինչպես երևում է, ծանոթ չլինելով ծածկագրության կառուցվածքին, թույլ է տվել գրչական սխալներ, որոնք դժվարացնում են վերծանության գործը: Խնդիրը, սակայն, բարդանում է նաև նրանով, որ պարզ չէ, թե ծածկագրության թվականը ինչ համակարգով է՝ վրացական քրոնիկոնո՞վ, փրկչականո՞վ, թե՞ հայկական մեծ թվականով: Որոշակի հայտնի չէ նաև, թե օգտագործված տառանիշները ո՞ր այբուբենի թվական արժեքներով են՝ արաբական, վրացական, պարսկական, թե հայկական: Այդ բարդություններն են, անշուշտ, պատճառը, որ տարբեր մտածումների տեղիք են տվել և կատարված վերծանություններից ոչ մեկը դեռևս հաստատապես քաղաքացիություն չի ստացել ու վեճը շարունակվում է:

Սայաթ-նովայի «Այբբբիմըն» խաղն առաջին անգամ հրատարակել է Գևորգ Ասատուրը (Աստվածատուրյանը) «Ազգագրական հանդեսում», 1903 թ., առանց, սակայն, ուշադրություն դարձնելու ծածկագրության վրա: Խաղը վերահրատարակել է բանասեր Գ. Լևոնյանը, որը նույնպես կարևորություն չի տվել ծածկագրությանը՝ համարելով այն «գրչի սպորտ» և գտել, որ «նման սպորտային խաղերի մեջ չպետք է արվեստ կամ խորը մտքեր որոնել»¹:

Առաջին ուսումնասիրողը, որն ուշադրություն է դարձրել խնդրո առարկա ծածկագրության վրա և հանգամանորեն զբաղվել նրա վերծանությամբ, Մ. Ս. Հասրաթյանն էր²: Հետագայում ծածկագրության վերծանությամբ զբաղ-

1 Գ. Ասատուր, Սայաթ-նովայի անհայտ երգերից, «Ազգագրական հանդես», Ժ գիրք, 1903, էջ 106:

2 Գ. Լևոնյան, Սայաթ-նովա, Երևան, 1931, էջ 174:

3 Մ. Ս. Հասրաթյան, Սայաթ-նովայի հայերեն մի քանի խաղերի մասին («Տեղեկագիր» ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, 1943, № 3, էջ 41—42):

վել են Ավ. Շահումյանը⁴, Հ. Ս. Սևոյանը⁵, Գ. Նալբանդյանը, Հ. Գ. Բախչինյանը⁶, Պարույր Սևակը⁷ և ուրիշներ։ Հոգվածը շտանրաբեռնելու նպատակով հարկ չենք համարում քննարկել նշված դիտականների վերծանությունները և խոսել նրանց որդեգրած աղբյուրագիտական մեթոդների, հարուցած վեճերի մասին։

Նախորդ ուսումնասիրողների վերծանություններից ամենահաջողը, մեր կարծիքով, Մ. Ս. Հասրաթյանի կատարածն է։

Հասրաթյանը ծածկագրության ատաղձ է ընտրել «Այբբբիմըն» խաղի երկրորդ՝ «Հասա րա է, հասա ջե, հասասե»⁸ տողը, որի մեջ կատարել է ծածկագրության վերծանման գործում էական նշանակություն ունեցող մի սրբագրություն։ Սա էլ հնարավորություն է տվել նրան գտնելու ծածկագրության գաղտնարանը մտնելու ճիշտ ուղին։ Մենք նկատի ունենք ծածկագիյ տողի «րե» թվանշանի սրբագրությունը «ռա»-ի։ Հասրաթյանը այդ սրբագրումը կատարել է հետևյալ հիմնավորված կոմաններով։

«Այբբբիմըն» խաղը գրված է եղել վրացական տառերով, իսկ վրացական այբուբենում բացակայում է հայկական կոշտ «ռ» հնչյունը, ուստի բնական է, որ այն պիտի տրվեր «ր»-ով։ Այսպիսով՝ «ր» տառի անունը «րե» և ոչ թե «ռա» է. «րա»-ն, ավելի ճիշտ, «ռա»-ն, «ռ»-ի անունն է։ Եվ, վերջապես, հայկական այբուբենում «ր»-ն ունի 5000-ի թվական արժեք, իսկ այդպիսի մեծ թվով անկարելի էր տարեթիվ գաղտնագրել։

Ծածկագրության մեջ «ռ»-ի առկայությունը հիմք է տվել Հասրաթյանին լուծելու նաև թվականության համակարգի հարցը. նա պարզել է, որ «ռ»-ով (հաղարով) չի կարելի ո՛չ հայկական թվական գաղտնագրել, և ո՛չ էլ վրացական քրոնիկոն, միակ հնարավոր համակարգը, որ կարող էր համապատասխանել բանաստեղծի ապրած ժամանակաշրջանին, այդ փրկչականն է, ներկայիս մեր գործածական թվականը։

Ի դեպ, անսելի է որոշ ուսումնասիրողների հայտնած կասկածանքը, թե ծածկագրության մեջ տարեթիվը փրկչականով գաղտնագրված լինել չէր կարող, քանի որ Սայաթ-Նովան իր ստեղծագործություններից ոչ մեկի մեջ այդ թվականը չի օգտագործել։ Այդ կասկածանքը փարատելու համար բավական է մատնացույց անել Կախի իջևանատանը բանաստեղծի գրած ձեռագրի հիշատակարանը, ուր նա կատարել է տոմարական այնպիսի բալիդ հաշվումներ, որ կարող էր անել միայն վարժ տոմարագետը, ուստի նրա համար խնդիր չէր կարող հանդիսանալ թվականության ցանկացած համակարգն ընտրելը։

Ճիշտ է եղել ծածկագիր տողում Հասրաթյանի կատարած մյուս թվանշանի վերծանությունը ևս՝ «ջե»-ն՝ «չա»-ի։ «Ջ»-ն հայկական այբուբենում ունի 900-ի թվական արժեք, որը հավարավորի հետ կլինի 1900, իսկ այդ տարե-

⁴ Ավ. Շահումյան, Սայաթ-Նովայի մի բանի ծածկագրերի վերծանումը («Երեկոյան Երեան», 1963, № 247)։

⁵ Հ. Ս. Սևոյան, Երբ է ծնվել Սայաթ-Նովան («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3, էջ 119—130)։

⁶ Հ. Գ. Բախչինյան, Սայաթ-Նովայի երեք ծածկագրի վերծանությունը («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 4, էջ 169—179)։

⁷ Պարույր Սևակ, Սայաթ-Նովա, Երեան, 1969, էջ 71—79։

⁸ Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կաղմեց Մ. Ս. Հասրաթյան, Երեան, 1959, էջ 68։

Թիվն անհնարին է համատեղել Սայաթ-Նովայի ապրած ժամանակաշրջանի հետ. նրա դարաշրջանին համապատասխանող միակ հարյուրավոր տառանիշ թվանշանը, որ կարող էր գործածվել, այդ հայկական այբուբենի «չ» տառն է 700-ի թվական արժեքով. որը և ընդունել է Հասրաթյանը: Աղավաղումը կարող էր առաջանալ ընդօրինակման ժամանակ. բոլորդիր և նոտրդիր բնագրերում ջ և չ տառանիշների աղավաղումը սովորական երևույթ է: Սակայն մենք հակված ենք կարծելու, որ բանաստեղծի որդին խաղերը գրի է առել թելադրության միջոցով և առաջացած սխալները դրա հետևանքով են: Ծածկագրի շարունակության մեջ մենք համաձայն չենք Հասրաթյանի հետ և ընտրել ենք վերծանության այլ ուղի: Ամենից առաջ, համաձայն չենք Հասրաթյանի հետ այն հարցում, թե «ռա»-ի մոտ «է»-ն («Հասա ռա է») թվանշան է 7-ի թվական արժեքով: Չենք ընդունում նաև Պարույր Սևակի առաջարկը «է»-ն ուղղել «ե» 5-ի թվական արժեքով, այլ համարում ենք այն օժանդակ բայ, ինչպես ընդունել են այլ ուսումնասիրողներ: Գտնում ենք, որ հազարավոր թվանշանից հետո և հարյուրավորից առաջ միավոր դրվել չէր կարող, նման շփոթություն բանաստեղծը թույլ տալ չէր կարող, այդպիսի դեպք հայ մատենագրության մեջ մեզ ընդհանրապես հայտնի չէ, եթե նկատի չունենանք վուլգար կոչվող թվանշանները, որի ժամանակ միավոր թվանշանը դրվում է տասնավորներից, հարյուրավորներից և հազարավորներից առաջ՝ բազմապատկության նպատակով: Այսպես օրինակ՝ Ռ Ե Ճ Կ Զ թվականը կվերծանվի ոչ թե $1000 + 5 + 100 + 60 + 6 = 1171$ -ի, այլ՝ $1000 + (5 \times 100) + 60 + 6 = 1566$ -ի:

Հասրաթյանը գտնում է, որ ծածկագիր տողից մի վանկ պակասում է և դա պիտի լինի տասնավոր թվանշանը: Հարմար է համարում բացակայող այդ թվանշանն ընդունել «ծա»-ն (50-ը): Այդ առաջարկն ընդունելի չէ, քանի որ ծածկագիր տարեթվի միավոր և տասնավոր թվանշանները, ինչպես կտեսնենք հետո, գտնվում են հաջորդ տողում:

Տողի վերջին բառի՝ «Հասասե»-ի մասին դժվարանում ենք վճռական խոսք ասել, որովհետև այն հանգակապ բառ է, բանաստեղծի խաղում հանդիպում է չորս անգամ և տարբեր իմաստներով:

Քանի որ չենք ընդունում Հասրաթյանի վերծանության մեջ ծածկագիր տողի «ռա»-ի կողքի «է»-ն միավոր թվանշան համարելը և թվանշանի ներմուծումը դրսից, այդ դեպքում հարց է առաջանում. ո՞ր են ապա ծածկագրված տարեթվի միավոր և տասնավոր թվանշանները, մի՞թե բանաստեղծը մոռացել է նշել: Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ պակասող թվանշանները կան, սակայն դրանք պիտի փնտրել ոչ թե քննարկվող տողի մեջ, այլ նրա հաջորդ՝ «Անգրբժակի մե ձեն էկավ դասեղաս» տողում:

Մատնացույց արված այս տողում ուշագրավ է «Անգրբժակի» բառը, որի վրա, դժբախտաբար, ուշադրություն չեն դարձրել ուսումնասիրողները. համարել են այն «հանկարծակի» բառը և տողի իմաստը հասկացել են այնպես, իրեն թե բանաստեղծը դասեղաս ձայնը հանկարծակի է լսել: Սայաթ-Նովան ինչպե՞ս կարող էր արտասանել կամ գրել «հանկարծակի» բառը, իսկ մենք «անգրբժակի» բառի նմանությունը «հանկարծակիին» համարում ենք պատահական: Այն, ինչպես և նրան հաջորդող «մե»-ն աղավաղված են սխալ բառանջատման հետևանքով: Միացնելով այդ երկու բառերն իրար, ունենում ենք «անգրբժակիմե», վերջին «ե»-ն համարելով օժանդակ բայ, ճիշտ բառանջատումով կլինի.

«Անգըր ծա կիմ է»։ Վերծանությունը ամբողջության մեջ կկարդացվի՝ «Անգըր ծա կիմ է ձեն էկավ դասեղաս»։ Այստեղ «ծա»-ն տարեթվի մեջ փնտրվող թվանշանի արժեքով հայկական այբուբենի «ծ» տառն է, իսկ «կիմ»-ը՝ երեքի թվարժեքով «գիմ»-ը, քանի որ «գ»-ի անունն է «գիմ», իսկ «կ»-ինը «կեն», այդ լավ հայտնի է բանաստեղծին և նրանք իրենց անուններով նա գործ է ածել իր 50-րդ խաղում։

«Գիմ գազթըտ արա...»։

«Ծա ծովումըն մնաց...»։

«Կեն կամով ավելցրար...»։

Անփորձ ընթերցողին առաջին հայացքից անսովոր կարող է թվալ «անգըր» բառը, որն ունի «հաշվիր», «համարիր» իմաստը։ Ստ. Մալխասյանցի բառարանում այդ բառը ստուգաբանված է. «Անգար. գործ է ածված լանգարի լինել դարձվածքում. Հաշվի առնվել, համարվել, կարևորություն ունենալ։ Հմմտ. անգարել»։ Իսկ «անգարելիի» տակ գրել է. «Անգարել(եցի), (պահլ. „angartan, համարել, պատմել. պարսկ. angastan հրմ. angar, կարծել, համարել), հաշվի առնել, սեպել»⁹։ Հր. Աճառլանի Արմատականում այն ստուգաբանված է. «Անգար. (պահլ. angartan «համարել, պատմել», պաղենդ. angardān «ենթադրել, հաշվել, պատմել»,... angar «համարի՛ր, կարծի՛ր»¹⁰ (ընգծումը մերն է — Ա. Ա.)։

Սայաթ-Նովայի «անգըր»-ը, ինչպես տեսնում ենք, գործ է ածված տեղին, «հաշվիր» նշանակությամբ. նախորդ տողում նա ծածկագրել է հազարավոր «ռա»-ն և հարյուրավոր «չա»-ն, իսկ հաջորդ տողում պահանջել է հաշվել տասնավոր «ծա»-ն և միավոր «գիմ»-ը։

«Այբ», «ծա» և «գիմ» թվանշան տառերն իրենց անուններով գործածությունը հիմք է տալիս կարծելու, որ ծածկագիր տողի «չ» թվանշանը (աղավաղված «ջ»-ի) ևս պիտի տրված լիներ իր ճիշտ անունով՝ «չա» և ոչ «չե»։ Հնարավոր է ենթադրել նաև, որ «չ»-ի կողքի «ե» տառը օժանդակ բայ է՝ «է»-ն, և թյուրիմացությամբ է միացել «չ»-ին։

Եվ այսպես, մեր ուղղումով, ծածկագիր տողերը կլինեն.

Հասա Թա է, Հասա Չ[ա] է, հասասէ,
Անգր Ծա, Գիմ է, ձէն էկավ դասեղաս։

Ծածկագրում գործածված թվանշանների գումարը կլինի. $\text{Թա } (1000) + \text{Չա } (700) + \text{Ծն } (50) + \text{Գիմ } (3) = 1753$ ։ Այդ թվականից հանելով բանաստեղծի տվյալ խաղի մեջ մատնացույց արած իր տարիքը՝ քառասուն, ունենում ենք 1713։ Ըստ այսմ, Սայաթ-Նովայի ծննդյան թվականը լինում է 1713։

Ուսումնասիրողներից ոմանք, ինչպես հայտնի է, Սայաթ-Նովայի ծննդյան տարեթվի համար առաջարկել են այլևայլ թվականներ և այդ կապակցությամբ մատնացույց արել մի շարք կովաններ։ Ուշագրավ են հատկապես Պարույր

⁹ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. Ա, էջ 99։

¹⁰ Հր. Աճառլան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, էջ 183։

Սևակի փաստարկները, որոնց քննարկումը, սակայն, գուրս է մեր խնդրից. մեր նպատակն է եղել, ինչպես ասել ենք, վերծանել միայն «Ալբրեխտը»-ի ծածկագրությունը, իսկ թե մեր վերծանած 1713-ը ինչպես պիտի համաձայնեցվի առաջարկված այլ թվականների և այդ կապակցությամբ մատնացույց արված փաստարկների հետ, այդ թողնում ենք լուծելու մեր լավագիտակ և բազմափորձ սայաթնովագետներին:

РАСШИФРОВКА ТАЙНОПИСИ СТИХОТВОРЕНИЯ

«ԱՅՐԵԽՏԸՆ» СЯТ-НОВЫ

Доктор историч. наук А. Г. АБРАМЯН

(Резюме)

Важным источником для выяснения даты рождения Саят-Новы считается его криптографическое стихотворение «Ալբրեխտըն». Расшифровкой этой тайнописи занимался ряд ученых, однако они, по нашему мнению, не достигли цели. Мы вносим в текст указанного стихотворения некоторые текстологические поправки и предлагаем новую расшифровку, из которой следует, что Саят-Нова родился в 1713 г.